ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

23.08.2019թ.
ք. Երևան

Քաղաքացիական գործ
թիվ ԵԴ/15379/02/18

ՈՐՈՇՈՒՄ

Թիվ ԵԴ/15379/02/18 քաղաքացիական գործի ընդդատությունը որոշելու մասին

1. Գործի դատավարական նախապատմությունը և ընդդատության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊ ընկերությունը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ պատասխանողներ Ստեփան Գառնիկի Գրիգորյանի և Արմեն Պետրոսի Ղազարյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին:

Հայցադիմումում, որպես Ստեփան Գրիգորյանի հասցե, նշվել է **ք. Երևան, Տիգրան Մեծի 30 շենք, բնակարան 2 հասցեն,** իսկ որպես Արմեն Ղազարյանի հասցե՝ Կոտայք, գ. Ողջաբերդ, 6-րդ փողոց, 242 տուն հասցեն:

Հայցադիմումին կից ներկայացված 30.01.2016թ. թիվ 234804 Բաժանորդային պայմանագրում, որպես Ստեփան Գրիգորյանի գրանցման հասցե, նշված է Բաղրամյան, գյուղ Դալարիկ, Օրջոնիկիձեյի փողոց, 2/3 շենք, բնակարան 12 հասցեն, իսկ որպես փաստացի բնակության հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 30 շենք, բնակարան 2:

Դատարանի **(դատավոր՝** Ռ. **Ներսիսյան)** 02.08.2018թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Ստեփան Գրիգորյանին ք. Երևան, Տիգրան Մեծի 30 շենք, բնակարան 2 հասցեում ուղարկված դատական ծանուցագրերը Դատարան են վերադարձվել «թերի հասցե», «չպահանջված», «տեղափոխված», «անհայտ հասցե» նշումներով:

Պատասխանող Ստեփան Դրիգորյանի պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով Դատարանը 02.10.2018թ. գրություն է ուղարկել Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին,

որին ի պատասխան, Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 01.11.2018թ. թիվ 23/35-74216 գրությամբ տեղեկացվել է, որ ք. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 30 շենքում թիվ 2 բնակարան գոյություն չունի, հետևաբար Ստեփան Գրիգորյանին ծանուցել հնարավոր չի եղել:

30.01.2019թ. Դատարանը որոշում է կայացրել նախնական դատական նիստը 02.04.2019թ. նշանակելու մասին:

Պատասխանող Ստեփան Գրիգորյանին նախնական դատական նիստ նշանակելու մասին դատական ծանուցագիրը 08.02.2019թ. ուղարկվել է ք. Երևան, ՀՀ Բաղրամյան շրջան, գյուղ Դալարիկ, Օրջոնիկիձեյի փողոց, 2/3 շենք, բնակարան 12 հասցեով, որը Դատարան է վերադարձվել «չպահանջված» նշումով:

Պատասխանող Ստեփան Գրիգորյանի պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով Դատարանը 08.02.2019թ. կրկին գրություն է ուղարկել Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին, որին ի պատասխան, Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 04.03.2019 թիվ 23/35-13033 գրությամբ տեղեկացվել է, որ ք. Երևան, Տիգրան Մեծի 30 շենք, բնակարան 2 հասցե գոյություն չունի, հետևաբար Ստեփան Գրիգորյանին ծանուցել հնարավոր չի եղել:

02.04.2019թ. Դատարանը որոշում է կայացրել ապացուցման պարտականությունը բաշխելու մասին:

Սույն գործով նախնական դատական նիստը 04.07.2019թ. նշանակելու վերաբերյալ ծանուցագիրը պատասխանող Ստեփան Գրիգորյանին ուղարկվել է Բաղրամյան շրջան, գյուղ Դալարիկ, Օրջոնիկիձեյի փողոց, 2/3 շենք, բնակարան 12 հասցեում, որը պատասխանողի ստորագրությամբ ստացվել է 19.04.2019թ.:

04.07.2019թ. նշանակված դատական նիստի արձանագրության համաձայն՝ կողմերը չեն ներկայացել:

04.07.2019թ. Դատարանը որոշում է կայացրել գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25 հոդվածի համաձայն՝ 1. Դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի: Դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել սույն օրենսգրքի 24-րդ կամ 138-րդ հոդվածով

սահմանված կանոնների խախտմամբ: Դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում: Գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կայացվում է որոշում:

Տվյալ դեպքում, պատասխանողներից մեկի հասցեն, հայցադիմումով նշված է Կոտայք, գ. Ողջաբերդ 6փ., 242 տուն, իսկ մյուս պատասխանողի հասցեն հայցադիմումով՝ նշվել է Երևան, Տիգրան Մեծի 30շ., բն. 2: Մինչդեռ, գործում առկա փաստաթղթերի ուսումնասիրությունից, դատարանն արձանագրում է, որ Ստեփան Գրիգորյանի հասցեն՝ Բաղրամյանի շրջ., գ. Դալարիկ, Օրջոնոկիձե փ. 2/3., բն. 12 հասցեն է: Նշված հասցեն առկա է հայցվորի հետ կնքված պայմանագրերում, մինչդեռ հացվորը այն չի մատնանշել հայցադիմումում: Նշված հասցեով ուղարկված ծանուցումները, պատասխանողը ստանում է: Փաստորեն, հայցադիմումով, հայցվորը հստակ չի մատնանշել, պատասխանողի հասցեները:

Վերոգրյալի հաշվառմամբ, դատարանը գտնում է, որ գործը պետք է հանձնել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը»:

Հարկ է նշեր որ քննարկվող քաղաքացիական գործով պատասխանող Ստեփան Գրիգորյանի կողմից տվյալ գործի տարածքային ընդդատության վերաբերյալ առարկություն չի ներկայացվել:

Դատարանի աշխատակազմի Արաբկիր նստավայրի պատասխանատուի 17.07.2019թ. թիվ Ե-146855/19 գրությամբ գործն ուղարկվել է ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Մ. Սիմոնյան) 02.08.2019թ. որոշմամբ գործն ուղարկվել է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Տվյալ դեպքում «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 24.07.2018 թվականին հայց է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, որով պատասխանողներ նշել է Ստեփան Գառնիկի Գրիգորյանին (հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ փողոց, 30 շենք, 2 բնակարան) և Արմեն Պետրոսի Ղազարյանին (հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Ողջաբերդ, 6 փողոց, 242 տուն):

Հայցվոր «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի և 22-րդ հոդվածի 1-ին մասի կանոններով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ պատասխանողներից մեկը՝ Ստեփան Գառնիկի Գրիգորյանը, հաշվառված (բնակվում) է Երևան քաղաքում, իր ընտրությամբ և

տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ հայցը ներկայացրել է իրավասու դատարան՝ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, պարզելով, որ հայցը ներկայացնելիս պահպանվել են տարածքային ընդդատության կանոնները, այն վարույթ է ընդունել:

Վերոգրյալից հետևում է, որ ի սկզբանե նշված քաղաքացիական գործն ընդդատյա է եղել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանելով մինչև հայցադիմումը վարույթ ընդունելն ընդդատության կանոնների պահպանման ստուգելու պահանջը, դրանից հետո որոշակի հանգամանքների ի հայտ գալու դեպքում սահմանել է ընդդատության փոփոխության կարգ՝ այն պայմանավորելով կոնկրետ հանգամանքներով: Դրանք են՝ առաջին՝ երբ հայցադիմումը վարույթ է ընդունվել սույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ, երկրորդ՝ որ այդպիսի նախաձեռնությամբ պետք է հանդես գա պատասխանողը, և երրորդ՝ որ պատասխանողն իր այդ իրավունքից պետք է օգտվի մինչև գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացվելը:

Այսպիսով, գործն այլ դատարանի քննությանը հանձնելու համար պարտադիր է վերը նշված երեք պայմանների միաժամանակյա առկայությունը:

Դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ երեք պարտադիր պայմաններից որևէ մեկը տվյալ դեպքում առկա չի եղել:

Դատարանը նաև գտնում է, որ պատասխանողի գտնվելու վայրն այլ դատարանի դատական տարածքում ընդգրկված լինելու փաստը բավարար չէ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու համար:

Մինչդեռ, ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պատասխանող Ստեփան Գրիգորյանը Արմավիրի մարզի (նախկինում՝ Բաղրամյանի շրջան) գ.Դալարիկ Օրջոնիկիձե փ. 2/3 շ., բն. 12 հասցեով ուղարկված դատական ծանուցագիրը ստացել է և, պատճառաբանելով, որ հայցվորը հայցադիմումում հստակ չի նշել պատասխանողի հասցեները, 04.07.2019 թվականի որոշմամբ գործն ըստ տարածքային ընդդատության ուղարկել է ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Դատարանը նաև արձանագրում է, որ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 02.04.2019 թվականին որոշում է կայացրել ապացուցման պարտականությունը բաշխելու մասին, ինչն էլ նշանակում է, որ նույնիսկ պատասխանողի կողմից գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ առարկելու դեպքում ՀՀ Երևան

քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը տվյալ գործը պետք է քններ ըստ էության և ոչ թե ուղարկեր ըստ տարածքային ընդդատության»:

Թիվ ԵԴ/15379/02/18 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 16.08.2019թ.:

2. Կիրառելի իրավական նորմերը, պատճառաբանությունները և եզրահանգումը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 21-րդ հոդվածի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

Օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում լուծում է ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործն այլ դատարանի քննությանը հանձնելու հարցը:

Օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-9-րդ կետերով նախատեսված հարցերը քննարկելուց հետո առաջին ատյանի դատարանը կայացնում է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան: Ընդ որում, օրենսդիրը սահմանել է նաև, որ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում հայցադիմումը կարող է ներկայացվել պատասխանողի բնակության վերջին հայտնի վայրի դատարան:

Նշված ընդհանուր կանոնից բացառությունները սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ, 23-րդ և 24-րդ հոդվածներով և վերաբերում են այլընտրանքային, պայմանագրային և բացառիկ տարածքային ընդդատությանը:

Հայցադիմումը վարույթ ընդունելիս, ի թիվս այլ հանգամանքների, դատարանը պետք է

պարզի արդյոք ներկայացված հայցադիմումում պահպանվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված տարածքային ընդդատության կանոնները, և միայն այդպիսիք պահպանված լինելու դեպքում որոշում կայացնի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին:

Այդուհանդերձ, եթե դատարանը գործը քննելիս պարզում է, որ այն վարույթ է ընդունել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ, ապա այդ գործը պետք է հանձնի ըստ ընդդատության: Ընդ որում, նշված դեպքում գործը ընդդատությամբ հանձնելու համար բավարար չէ միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ գործը վարույթ ընդունելու փաստի առկայությունը, այլ անհրաժեշտ է նաև, որ պատասխանողը ներկայացնի իր առարկությունը՝ գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ: Պատասխանողն իր առարկությունները կարող է ներկայացնել ոչ թե դատավարության ցանկացած փուլում՝ իր հայեցողությամբ, այլ մինչև դատարանի կողմից ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացվելուց հետո պատասխանողը այլևս չի կարող այդ հարցի կապակցության ներկայացնել առարկություններ, իսկ Դատարանը՝ կայացնել որոշում գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին, քանի որ ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործն այլ դատարանի քննությանը հանձնելու վերաբերյալ հարցը լուծվում է, ընդդատության վերաբերյալ առարկությունները ներկայացվում են, իսկ քաղաքացիական գործն ըստ ընդդատության ուղարկվում է բացառապես մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Ամփոփելով ամբողջ վերոգրյալը, հարկ է փաստել, որ գործն այլ դատարանի քննությանը կարող է հանձնվել ներքոշարադրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1.Քաղաքացիական գործն ի սկզբանե վարույթ է ընդունվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ,

2. Պատասխանողը գործի տարածքային ընդդատության վերաբերյալ ներկայացրել է իր առարկությունները,

3. Առարկությունները ներկայացվել են մինչև դատարանի կողմից ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Միայն նշված երեք պայմանների միաժամանկյա առկայությամբ գործն այլ դատարանի քննությանը հանձնված լինելու դեպքում է հնարավոր փաստել, որ գործն ըստ ընդդատության ուղարկած դատարանը չի հանդիսանում այն պատշաճ դատարանը, որը տվյալ գործով պետք է իրականացնի արդարադատություն:

Սույն դեպքում, Դատարանը (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջները, գործն ըստ տարածքային ընդդատության ուղարկելու մասին 04.07.2019թ. որոշումը, ըստ էության, կայացրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի ոչ թե վկայակոչված, այլ նշված հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավակարգավորման համատեքստում:

Նման եզրահանգումը բխում է գործի փաստական հանգամանքներից և դատարանի կողմից 04.07.2019թ. կայացված որոշման պատճառաբանություններից:

Մինչդեռ, քաղաքացիական գործն ըստ տարածքային ընդդատության ուղարկելու մասին որոշումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասով կայացնելու պայմաններում Դատարանը՝

1. Չի հիմնավորել, որ թիվ ԵԴ/15379/02/18 քաղաքացիական գործն ի սկզբանե վարույթ է ընդունել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտմամբ,

2. Գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին որոշումը կայացրել է առանց պատասխանողի կողմից տվյալ գործի տարածքային ընդդատության վերաբերյալ ներկայացված առարկության, որը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով, հանդիսանում է պարտադիր պահանջ՝ նման դատական ակտ կայացնելու համար:

3. Գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին որոշումը կայացրել է գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը կայացնելուց հետո, մինչդեռ, Օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ, 167-րդ հոդվածի 1-ին և 169-րդ հոդվածի 1-ին մասերով նախատեսված իրավակարգավորումների բովանդակությունից ակնհայտ է, որ ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործն այլ դատարանի քննությանը հանձնելու հարցը դատարանը լուծում է, իսկ պատասխանողը իր առարկությունները ներկայացնում է գործի քննության նախապատրաստական փուլում՝ մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման կայացումը: Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացվելուց հետո պատասխանողը այլևս չի կարող այդ հարցի կապակցության ներկայացնել առարկություններ, իսկ Դատարանը՝ կայացնել որոշում գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին:

Ամբողջ վերոգրյալը փաստում է այն մասին, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Ներսիսյանի կողմից գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին 04.07.2019թ. որոշումը կայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածով նախատեսված վերը թվարկված պայմանների բացակայության պարագայում:

Վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ թիվ ԵԴ/15379/02/18 քաղաքացիական գործը ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ըստ ընդդատության հանձնելու համար անհրաժեշտ փաստական և իրավական հիմքերը բացակայում են, ուստի թիվ ԵԴ/15379/02/18 քաղաքացիական գործը պետք է հանձնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները, և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Թիվ ԵԴ/15379/02/18 քաղաքացիական գործով իրավասու դատարան համարել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը:

2. Սույն որոշումը և թիվ ԵԴ/15379/02/18 քաղաքացիական գործի նյութերը ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

3. Որոշման մեկ օրինակն ուղարկել նաև Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ

ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՐ **ՄԱԱՄԻԿՈՆ ԴՐՄԵՅԱՆ**